Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
հոկտեմբերի 26-ի N 1864 - Ն որոշման

Կ Ա Ր Գ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականին անձը հաստատող փաստաթղթերը տրվում կամ փոխանակվում են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառում ունենալու դեպքում Հայաստանի Հանրապետությունում՝ ծառայության, իսկ օտարերկրյա պետություններում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից:

2. Առաջին անգամ անձնագիր ստանալու համար դիմումատուն անձամբ ներկայացնում է՝

1) դիմում.

2) ծննդյան վկայական կամ մինչև 16 տարին լրանալն ստացած անձնագիր.

3) 35 x 45 մմ չափսի երկու լուսանկար (գունավոր).

4) առկայության դեպքում՝ այլ փաստաթղթեր:

3. 16 տարին չլրացած անձի ծնողներից մեկը կամ օրինական ներկայացուցիչը 16 տարին չլրացած անձի անձնագիր ստանալու կամ փոխանակելու համար ներկայացնում է՝

1) դիմում.

2) ծննդյան վկայական կամ մինչև 16 տարին լրանալն ստացած անձնագիր.

3) 35x45 մմ չափսի երկու լուսանկար (գունավոր).

4) ծնողների ամուսնության վկայական, իսկ համապատասխան դեպքերում՝ մահվան, հայրության ճանաչման վկայականները կամ միայնակ մայր

լինելու մասին տեղեկանք կամ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը:

4. Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձնագիրը կարող է փոխանակվել դրանում պարունակվող տեղեկությունները փոխելու, գրառումներում անճշտություններ հայտնաբերելու, անձնագիրն օգտագործման համար ոչ պիտանի լինելու, ինչպես նաև այն դեպքում, երբ՝

1) քաղաքացին փոխել է բնակչության պետական ռեգիստրում իր վերաբերյալ գոյություն ունեցող այն տվյալները, որոնք սույն օրենքի ուժով ենթակա են ամրագրման քաղաքացու անձնագրում.

2) լրացել են մուտքի վիզաները փակցնելու համար նախատեսված անձնագրի էջերը.

3) լրացել է անձնագրի վավերականության ժամկետը.

4) անձնագրի մեջ առկա են ոչ ճիշտ տվյալներ.

5) քաղաքացին նման ցանկություն է հայտնել:

5. Անձնագիրը փոխանակելու համար անձը ներկայացնում է՝

1) դիմում.

2) փոխանակման ենթակա անձնագիր.

3) 35 x 45 մմ չափսի երկու լուսանկար (գունավոր).

4) փաստաթղթում որևէ տեղեկություն փոխելու կամ գրառումներում անճշտություններ հայտնաբերելու դեպքում՝ նաև իրավասու մարմնի կողմից տրված փոփոխությունը կամ անճշտությունը հավաստող փաստաթուղթ, եթե այդ տեղեկություններն առկա չեն ծառայության վարվող շտեմարանում:

6. Տպագրված անձնագիրը անձն ստանում է անձամբ կամ ներկայացուցչի միջոցով:

7. Ծառայությունն անձնագիր տալիս կամ փոխանակում է դիմումը մուտքագրվելուց հետո 5-րդ աշխատանքային օրը: Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հիման վրա անձնագիր կարող է տրվել կամ փոխանակվել ավելի կարճ ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության

կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 11-ի N 1465-Ն որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով:

8. Անձնագիրը դիմումատուին հանձնվում է ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայականի հետ միասին:

9. Անձնագրում գրառումներ, նշումներ կատարելու, կորած, գտնված անձնագրերը հանձնելու, դրանք ոչնչացնելու, անձնագրի փոխանակման (կորստի, վավերականության ժամկետը լրանալու) կապակցությամբ մինչև նոր անձնագիր ստանալն անձի դիմումի հիման վրա ժամանակավոր վկայական տրամադրելու և այլ հարաբերությունների նկատմամբ տարածվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» N 821 որոշմամբ հաստատված ընթացակարգը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

27.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ